ԿԱՐԾԻՔ

Անդրանիկ Արարատի Եսայանի «Հյուսիսարևելյան Հայաստանի Տավուշ և Զակամ գավառները XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության մասին

Հայոց պատմության համեմատաբար քիչ ուսումնասիրված, բայց և քաղաքական կարևորություն ունեցող թեմաների նկատմամբ հետազոտողների հետաքրքրությունը վերջին երկու տասնամյակներին, հուրախություն մեզ, ոչ միայն մեծացել, այլև ավելի առարկայական է դարձել հայագիտության տարբեր, խիստ այժմեական խնդիրների վերաբերյալ կատարված գիտական օգտաշատ ուսումնասիրությունների առումով: Դա, առաջին հերթին, թերևս, վերաբերում է ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Արևելյան Հայաստանի տարածքային և էթնոժողովրդագրական խնդիրների վերհանմանը, լուսաբանմանն ու պատշաճ գիտական շարադրանքով ներկայացմանը: Արևմտյան Հայաստանի, իսկ վերջին տարիներին էլ՝ հատկապես ու նաև Արևելյան Հայաստանի առանձին տարածաշրջաններին, բնապատմական մարզերին կամ գավառներին վերաբերող մենագրություններն ունեն ոչ միայն պատմագիտական, հայրենաճանաչողական, աշխարհաքաղաքական, այլև գործնական-կիրառական նշանակություն: Ինչպես հայտնի է, թուրքական պատմագիտական շրջանակներում գերիշխում է այն տեսակետը, թե Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում ժողովրդագրական քաղաքականության բացասական միտումներ այլահավատների, այդ թվում՝ հայերի նկատմամբ երբևէ չեն եղել: Իր հերթին՝ Ադրբեջանն էլ պետական-կառավարական մակարդակով իր կամակատար գիտնականների և վայ-պատմաբանների միջոցով փորձում է աշխարհին մոլորեցնել՝ հակագիտական, շինծու և կեղծ թեզեր շրջանառելով, թե իբր հայերը բնիկ չեն, եկվոր են ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև ամբողջ Հայկական

լեռնաշխարհում ու տարածաշրջանում, իսկ բազմադարյան հայկական մշակույթն էլ սեփականելու նկրտումներ են դրսևորում: Ադրբեջանի կողմից պատմության նենգափոխումը լայնորեն օգտագործվում է հայության ու հայագիտության դեմ մղվող տեղեկատվական պատերազմում: Ուստի այսօր, առավել, քան երբևէ, հայ պատմագիտությունը պարտավորություն ունի սեփական ժողովրդի պատմությունը պաշտպանելու բոլոր տեսակի ոտնձգություններից, նենգափոխումներից ու կեղծարարություններից:

Գրախոսման ներկայացված սույն ուսումնասիրությունն այդպիսի հաջողված ձեռնարկումներից է, որի թեման կարևոր և արդիական է՝ Արևելյան Հայաստանում Սեֆյան տերության և Օսմանյան կայսրության վարած ժողովրդագրական քաղաքականության էությունն ու ակունքները ցույց տալու, տարածաշրջանի ժողովրդագրական դիմագծի խեղման և հայության համար ոչ նպաստավոր գործընթացների հաջորդականությունը տեսնելու առումով: Աշխատանքում ցույց է տրվել, որ ոչ հայանպաստ ժողովրդագրական քաղաքականության առաջին դրսևորումներն ու ժողովրդագրական պատկերի ակնհայտ դիմախեղումները կատարվել էին դեռևս XIII – XVI դարերում: Ատենախոսը սկզբնաղբյուրների (ձեռագրերի հիշատակարաններ, վիմագիր արձանագրություններ), հրատարակված արխիվային փաստաթղթերի, գիտական գրականության ընձեռած փաստերի և գիտական պարբերականներում եղած առանձին հաղորդումների քննական վերլուծության հենքի վրա կատարել է արժեքավոր համալիր ուսումնասիրություն՝ մանրամասն քննելով XVII դ. – XVIII դ. առաջին քառորդ ընկած ժամանակահատվածում Տավուշ և Զակամ գավառներում տեղի ունեցած ժողովրդագրական պատկերի փոփոխությունները, վեր հանել դրանք պայմանավորող հիմնական գործոնները և համոզիչ փաստերով, փաստարկումներով ու մեկնաբանություններով ներկայացրել է վերոհիշյալ ժամանակահատվածում Տավուշ և Զակամ գավառներում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացները և դրանց հետևանքները, ինչպես նաև այդ գավառների ամբողջական պատմությունը:

Ընդ որում՝ նման արդիական թեմայով և խիստ շահեկան ուսումնասիրություն կատարելու համար ատենախոսի առջև ծառացած գլխավոր խոչընդոտը փաստավիճակագրական բնույթի տվյալների խիստ սակավությունն է: Սակայն դա ամենևին էլ չի հուսաբեկել ատենախոսին զբաղվելու այնպիսի թեմայի ուսումնասիրությամբ, որի գիտական նշանակությունն ու քաղաքական արդիականությունը փոխկապակցված են: Ա. Եսայանը ներկայացրել է արժեքավոր ուսումնասիրություն, որին բնորոշ են թեմայի տրամաբանական զարգացումը, գիտական, հետազոտական ակնառու որակները, եզրահանգումների բավարար հիմնավորվածությունը, գրագետ շարադրանքը և լեզվաոճական պատշաճ մակարդակը: Ատենախոսը նաև գիտական շրջանառության մեջ է դրել նորահայտ հայալեզու սկզբնաղբյուրային տեղեկություններ և օտարալեզու վավերագրերի տվյալներ, համոզիչ կերպով հիմնավորել, որ Տավուշի և Ձակամի հատկապես բարձրադիր շրջանները բացառապես հայաբնակ էին, ինչպես նաև առաջարկել մի շարք բնակավայրերի տեղորոշումներ կամ կատարել պատմատեղագրական ճշգրտումներ:

Ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք և տրամաբանական բաժանում: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով 130 էջ է:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, կարևորությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, տարածքային և ժամանակագրական ընդգրկումները, կառուցվածքն ու բովանդակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, հետազոտության մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը, ատենախոսության ստեղծման անհրաժեշտությունը և կիրառական նշանակությունը:

Առաջին գլխում («Իրավիճակը Հյուսիսարևելյան Հայաստանում XVI դ. վերջին – XVII դ. սկզբներին»), որը բաժանված է երեք ենթագլուխների, ամփոփ

ներկայացված և լուսաբանված են XVI դ. տեղի ունեցած պարսկա-թուրքական ռազմական գործողությունները և դրանց ազդեցությունը Հյուսիսարևելյան Հայաստանի գավառների վրա: Անդրադարձ է կատարվել նաև ուսումնասիրված տարածաշրջանի վարչական բաժանումներին: Երկրորդ ենթագլխում ատենախոսը քննել է շահաբասյան բռնագաղթին Տավուշ և Զակամ գավառների հայության ենթարկված լինել-չլինելու խնդիրը և, վերլուծելով առկա հասանելի սկզբնաղբյուրների տվյալները, եզրակացրել, որ թեև Հյուսիսարևելյան Հայաստանի գավառները կրել են ռազմական գործողությունների ծանր հետևանքները, այնուամենայնիվ, այդ գավառները, բարեբախտաբար, մեծամասամբ զերծ են մնացել շահաբասյան չարաղետ բռնագաղթից: Երրորդ ենթագլխում ներկայացված են Հյուսիսարևելյան Հայաստանում Սեֆյան տիրակալների օրոք հաստատված ցեղերն ու դրանց տեղաբաշխվածությունը և էթնիկական տեղաշարժերի արդյունքում նշված տարածքների ժողովրդագրական պատկերի արագորեն խեղումն ի նպաստ եկվոր, օտարածին բնակչության:

Ատենախոսության երկրորդ գլխում («Տավուշ և Զակամ գավառները (1606–1725)»), որը բաղկացած է երեք ենթագլուխներից, ներկայացված են պարսկա-օսմանյան երկարատև հաշտության հաստատումը և վերահիշյալ գավառների՝ նորից Սեֆյան Պարսկաստանին անցնելը, ինչպես նաև առկա և հասանելի աղբյուրագիտական նյութի համակողմանի քննությամբ շարադրված է այդ գավառներում ստեղծված հայկական մելիքությունների պատմությունը: Երկրորդ ենթագլխում հանգամանալից լուսաբանված են տարածաշրջանում տեղի ունեցած ռազմաքաղաքական վերադասավորումներն ու դրանց հետևանքները, նաև անդրադարձ է կատարվել տարածաշրջանի ներքաղաքական կայունությունը խաթարած, չարաղետ, մեծ վնասներ ու կորուստներ պատճառած լեզգիների արշավանքներին: Երրորդ ենթագլխում ատենախոսը լուսաբանել է Սեֆյան Պարսկաստանի անկման պայմաններում Օսմանյան տերության նվաճողական քաղաքականության պատմությունը, ինչպես նաև նույն ժամանակաշրջանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների միտումներն ու առանձնահատկությունները, էթնիկական տեղաշարժերի պատճառներն ու

հետևանքները, բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերն ու նկատված փոփոխությունները: Հանգամանորեն վերլուծված են հատկապես Հյուսիսարևելյան Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների վրա խիստ բացասական ազդեցություն թողած թուրք-պարսկական ընդհարումները, որոնց ընթացքում տեղի ունեցան հայ բնակչության արտագաղթեր, գերեվարություններ, որի հետևանքով շատ հայ գերիներ, որպես ստրուկ, վաճառվեցին ստրկավաճառական շուկաներում, ինչպես նաև զգալիորեն աճեց մահացությունների թիվը:

Երրորդ գլուխում («Տավուշ և Զակամ գավառների ժողովրդագրական ու տնտեսական պատկերն ըստ Օսմանյան 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ըդարձակ դաֆթար»-ի»), որը բաժանված է տասնմեկ ենթագլուխների, ատենախոսը հանգամանորեն վերլուծել է օսմանյան վավերագիրը որպես սկզբնաղբյուր, առանձին-առանձին անդրադարձ է կատարել Տավուշ և Զակամ գավառների կազմում գտնվող նահիեների բնակչությանն ու վճարած հարկատեսակներին, ներկայացրել հաշվառված յուրաքանչյուր հարկատու ընտանիքի գլխավորի անունը, վճարելիք հարկերի քանակը, առանձին ենթագլուխներում ներկայացրել տարածաշրջանի ամբողջ բնակչությունը, բնակավայրերը, անմարդաբնակ գյուղերը, կատարել տեղորոշումներ ու բնակավայրերի անվանումների ճշգրտումներ, ինչպես նաև կատարել հայ և այլազգի բնակչության թվաքանակի հաշվում, տվել նշված գավառների ժողովրդագրական ընդհանուր պատկերը, փաստել, որ Հյուսիսարևելյան Հայաստանի լեռնագավառներն ամբողջովին հայաբնակ էին, իսկ ցածրադիր գոտիներում առկա էր այլացեղ ու այլակրոն բնակչության գերակայություն:

Ատենախոսության վերջին՝ չորրորդ գլխում («Հոգևոր-մշակութային կյանքը Զակամ և Տավուշ գավառներում XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին»), որը բաղկացած է երկու ենթագլուխներից, ատենախոսը ներկայացրել է վերոհիշյալ գավառների հոգևոր-մշակութային կյանքի աշխուժացումը, քննության ենթարկել ձեռագրական ժառանգությունը, անդրադարձել եկեղեցաշինությանը:

Եզրակացությունների մեջ հանրագումարի են բերվել ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Ատենախոսության շարադրանքում Անդրանիկ Եսայանը դրսևորել է բարեխիղճ հետազոտողին հարիր քննախույզ, օբյեկտիվ, սթափ և նորովի մոտեցում, ինչպես առանձին հարցերի, այնպես էլ հիմնախնդրի նկատմամբ ամբողջությամբ վերցրած: Ատենախոսությունն ընթերցվում է հետաքրքրությամբ: Այն արժեքավոր ներդրում է հայոց պատմության՝ քննարկվող ժամանակաշրջանի ամբողջական ուսումնասիրության գործում:

Բարձր գնահատելով ատենախոսության գիտական արժեքը՝ հարկ ենք համարում նշել, որ կատարված աշխատանքը զերծ չէ թերություններից, որոնց կապակցությամբ ցանկանում ենք արտահայտել մեր դիտարկումներն ու նկատառումները:

1. Ատենախոսության մեջ տեղ են գտել զգալի թվով վրիպակներ (էջ 7, 9, 11, 14, 16-19, 23, 25-26, 34, 36, 39, 46-49, 53, 60, 68, 75-76, 80-82, 93, 99 և այլն):
2. Որոշ պատմական եզրույթների գրության ընդունված գրելաձևերը պահպանված չեն, ատենախոսը դրանք ձևափոխել է (օրինակ, դաֆթար, փոխանակ՝ դավթար (էջ 48 և այլն), քանուննամե, փոխանակ՝ կանուննամե (էջ 48 և այլն), նահիյե, փոխանակ՝ նահիե (էջ 50 և այլն), քազա, փոխանակ՝ կազա (էջ 15):
3. Էջ 15-ում, խոսելով Գանձակ-Ղարաբաղի էյալեթի վարչական բաժանման մասին, ըստ 1593 թ. Գանձակ-Ղարաբաղի էյալեթի համառոտ դավթարի, ատենախոսը գրում է. «Գանձակի քազայի կազմում որպես առանձին նահիյե հիշատակված են Տավուշն ու Զակամը», որի համար հղում է կատարված Առաքել Դավրիժեցու աշխատությանը: Անհասկանալի է մնում, թե այդ նահիեների մասին հիշատակվա՞ծ է արդյոք Գանձակ-Ղարաբաղի էյալեթի համառոտ դավթարում:

4. էջ 69-ում Հասանսուի նահիեի Բալլուղայա բնակավայրի հարկատուների ցուցակի 25 և 26 թվահամարների տակ, կարծում ենք, կրկնված է «Հովհաննես՝ որդի Մխիթարի» ձևակերպումը:
5. էջ 74-ում գրված է. «Հարկամատյանի հեղինակները Գյոքքիլիսա բնակավայրը տեղադրում են Ղուզան գյուղին մոտ, հետևաբար այդ գյուղի գտնվելու վայրը նույնպես կարող ենք մոտավոր տեղորոշել»: Սակայն այդպես էլ գոնե մոտավոր տեղորոշման փորձ կատարված չէ: Կարծում ենք՝ Գյոքքիլիսան, որը բառացի թարգմանությունն է հայերեն Կապտավանքի, գտնվել է ներկայիս Չինչին գյուղից մոտ 4 կմ հարավ՝ Հախում գետակի աջ ափին, անտառամիջի մի բացատ դաշտամասում, որտեղ այժմ կանգուն է Կապտավանքի եկեղեցին: Այսինքն՝ դա Կ. Ղաֆադարյանի հիշատակած Կապտավանք գյուղատեղին է, որը ծածկված է եղել անտառով, երևացել են արտերի թմբեր և տնամերձ այգետեղեր (Կ. Ղաֆադարյան, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, էջ 232):
6. էջ 85-ում ատենախոսը գրում է. «Այս գյուղերից Շաքարբեկն ու Պապաջանը ոչ վաղ անցյալում ունեին հայ բնակչություն»: Պարզ չէ, թե ո՞ր ժամանակի մասին է խոսքը:
7. Կարծում ենք, որ քննվող ժամանակաշրջանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների միտումների ու առանձնահատկությունների համատեքստում հայ բնակչության թվաքանակի աճի վրա բացասական ազդեցություն թողած երևույթների շարքում ատենախոսության մեջ պետք է ավելի ծավալուն անդրադարձ լիներ նաև տնտեսական հարկադրանքի, մասնավորապես՝ պարսկական և թուրքական իշխանությունների վարած հարկային խտրական քաղաքականության հետևանքով ու բռնությամբ կատարված կրոնափոխության, ինչպես նաև սովի, համաճարակների ու բնական աղետների դեպքերին:

8. Բավականին համառոտ են 1.1., 2.2., 3.1., 3.2., 3.4., 3.6., 3.7. ենթագլուխների ամփոփումները. ցանկալի կլիներ ավելի ընդարձակել այդ ամփոփումները և զետեղել ենթագլխի շարադրանքի վերջում:
9. Սրբագրման կարիք ունի ատենախոսության «Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ»-ը (օրինակ, «3. Արխիվային փաստաթղթեր»-ում նշված է երկու անուն թուրքերեն վավերագիր: Մեր կարծիքով՝ այնքան էլ հիմնավորված չէ դրանք առանձնացնելը՝ տպագիր սկզբնաղբյուրներից, կամ ինչու այդ ցանկում ներառված չեն, օրինակ, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը):
10. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը կազմեր և որպես հավելված աշխատանքին կցեր Տավուշ և Զակամ գավառներում ընդօրինակված ձեռագրերի աղյուսակ՝ ձեռագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատվությամբ:
11. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը կազմեր և ուսումնասիրության մեջ ընդգրկեր հետազոտված ժամանակաշրջանում Տավուշ և Զակամ գավառները ներկայացնող քարտեզ:

Վերոհիշյալ դիտարկումներն ամենևին չեն նսեմացնում աշխատանքի գիտական լուրջ արժեքը և ատենախոսի՝ գիտական աշխատանք կատարելու անուրանալի շնորհներն ու կարողությունը, իսկ ատենախոսությունը որպես մենագրություն տպագրելու դեպքում հնարավոր է վերացնել նաև նշված թերությունները:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ գրախոսվող ատենախոսության թեման արդիական է, ունի գիտաճանաչողական և քաղաքական նշանակություն: Այն կարևոր ներդրում է Հայաստանի ժողովրդագրական գործընթացների պատմությունն ամբողջացնելու ուղղությամբ:

Ամփոփելով նշենք, որ ատենախոսությունը գրված է պատմականության և գիտականության դիրքերից: Հեղինակի հրատարակած հոդվածները և սեղմագիրն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը

ներկայացվող պահանջները, իսկ մեր նշած դիտարկումներն էլ ամենևին չեն ստվերում աշխատությունը, ուստի միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող Հայոց պատմության մասնագիտական խորհրդին՝ Անդրանիկ Արարատի Եսայանին շնորհել իր հայցած «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.թ.՝ /Արման Մանուկի Մալոյան/

Ստորագրությունը հաստատում եմ,
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարանի տնօրեն՝ /Տեր Արարատ քահանա Պողոսյան/

01.10.2024 թ.